ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 19. Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները

1. ՄԿՈՒ բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) հաստատում է ոլորտային որակավորման շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը.

2) սահմանում է ՄԿՈՒ ոլորտում կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրման և գործարկման կարգը.

3) սահմանում է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևերի իրականացման կարգն ու մեթոդաբանությունը.

4) հաստատում է փորձարկվող կրթական ծրագրերի երաշխավորման պայմանները, նախագծերի փորձարկման, հաստատման, ինչպես նաև վաղաժամկետ դադարեցման հիմքերն ու կարգը.

5) հաստատում է փորձարարական ծրագրերը և նախագծերը, իսկ համապատասխան հիմքերի առկայության դեպքում վաղաժամկետ դադարեցնում է դրանք.

6) իրականացնում է մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզավորումը.

7) սահմանում է պետական ՄՈՒՀ-ի խորհրդի անդամին ներկայացվող նվազագույն պահանջները, առաջադրման, փոխարինման և լիազորությունների դադարման ու դադարեցման կարգը.

8) սահմանում է պետական ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, հաստատման և այդ ծրագրի կատարման մասին հաշվետվությունների ներկայացման կարգը.

9) ~~սահմանում է ՄՈՒՀ-ի ղեկավարման իրավունքի հավաստագրման քննության կազմակերպման և հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը.~~

……

Հոդված 27. ՄՈՒՀ-ի ղեկավարման իրավունքի հավաստագրումը

1. ~~Հավաստագիր ստանալու համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական գործունեության առնվազն~~

~~հինգ տարվա աշխատանքային ստաժ~~Հավաստագիր ստանալու համար կարող է դիմել «Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը :

……